

Գաւառիկ — Աղաւթ:

Կըլնի չիմի մի մարդ մի կնիկ. սրանք ունենում են էրկու էրեխայ: Համայ էս էրեխէքը ազտութեայ կնկանից են ըլնում. ընդուր համար էլ էս եղի կնիկը դրանց ըսկի օր չէր տալի: Ասենք կնիկը շատ էր զօռում մարդին. որ էդ էրեխէրանցը տանի մի գհով կորցնի՝ համայ մարդը չէր լսում:

Մի օր էլ աշունքին, մարդը սերմի ցորէնը հաղորում ա, որ առաւօտը տանի արտը՝ ցանի: Կնիկ գու կնիկ. քշերը վէ կաց, սերմացու ցորէնը աղանձա՝ էլ եղ լցրա՝ ջուալը, որ մարդը տանի ցանի՝ դուս յգայ:

Մարդը առաւօտը թէզ վեր ա կենում, սէլը լծում, սերմացուն դնում վրէն, էթում արտը ցանում՝ եղ գալի. խեղճը ինչ ա իմանում կնկայ սատանութիւնը — ինքը բէխաբար:

Անց ա կենում մի ամիս: էրկու ամիս՝ խալիս արտերը կանանչում ա, էս մարդինը՝ չէ:

— Այ կնիկ, կասի. բաս էս ո՞նց պտի անենք. խալիս ցորէնները կանանչել ա, դեռ մի թզաւանք էլ գեննիցը բանձրացէ՝ մերսնքը ըսկի ծկթել էլ չեն. էս ի՞նչ բաս պտի ըլնի: Կնիկը կասի.

— Այ մարդ, ես գրա գեղը գիտամ, թէ արիւր՝ իմաց կաց ցորէնդ կ'կանանչի. թէ չէ՝ հօ չէ — էս տարի անհաց կ'մնանք: Տօր էդ երկու էրեխիդ մինը արտի էս գլխին մորթա՝ մինը էն. տես ո՞նց ա կանանչում. թէ չկանանչի՝ ես տամ: Մարդը կասի.

— Այ քեաֆաւր, այ անԱստօծ. ես ո՞նց կ'ըմըշեմ իմ աղիղ բալէքը տանեմ մորթոտեմ, որ ինչ ա արաս պտի կանանչի: Զրհանդամին կանանչի՝ սեւ խաւարին. որդկերանցիցս ձեռք վեր ունեմ, թէ պտի ցորէնս կանանչի:

— Դո՛ւ գիտաս, այ մարդ, ես մի բան էր ասեցի, սրանից դէնը քէֆը քուճն ա, ինչ կուզես արա. կուզես մորթա՝ կուզես՝ չէ. դո՛ւ անհաց կ'մնաս. ինձ ինչ:

Խեղճ մարդը մնացել էր էրկու կրակի միջին. — էրեխէքանցը տանէր մորթէր՝ ձեռք չէր դօրում. չմորթէր՝ ինչ անէր. պտի սոված մեռնէին: Վերջը միտք արեց, որ չ'սրսլանի. հէնց տանի չօլը, ընդէ բաց թողայ՝ գայ. ինչ կըլնեն կըլնեն:

Ըսեցնց էլ անուամբ աս: Մի օր վեր ա ունում էրելսէքանցը հին-
նէն տանում չօլը: Ասում ա — այ որդիք. դուք բոլէ կացէք,
ես հրէս գալիս եմ: Ասում ա ու ինքը մի ուրիշ ճամփով եդ
գալի տուն, նրանց թողում ընդէ:

Քիր ու աղպէր մնում են մօտիկ անհլօն, թէ էս ա որդէ որ ա
իրանց հէրը կ'գայ: Մնում են մի սհաթ, էրիու սհաթ՝ տե-
նում են անց հէր կայ անց դագ: Քիրը աղպօրիցը մի պուճուր
մենծ ա ընում. գլխի ա ընկնում, որ հէրը բերիլ ա իրանց ըս-
տէ բաց թողէ՝ ինքը գնացէ տուն: Աղպօրը վեր ա ունում՝ մի
ճամփայ ընում՝ էթում:

Քիր ու աղպէր սոված, ծարաւ մի քանի օր իրար վրա ճամ-
փայ են էթում: Ճամփէքին էլ որ ասես առու, զագ չի ռաստ
գալի, որ մի պուճուր ջուր էլ ա խմեն — ծարաւու խեղճերը պա-
տըւում ին: Քիրը ասենք մենծ էր, անց որ ընէր էլի կգիմա-
նար. հիմայ աղպէրը չէր կարում գիմանայ. ծարաւու խեղճ
աղպօր բերանը պաղանձուել էր:

Գալիս են գալիս, շատն ու քիչը Աստօժ գիտայ՝ աղպէրը տե-
նում ա ճամփին մի կովի պճղի տեղ՝ լիքը ջուր:

— Քո՛ւրիկ, ասում ա. էս պճղիցը մի քիչ ջուր չխմե՛մ. ախար
ես ծարաւ մեռայ, է՛:

— Չէ՛, չէ՛, չէ՛, աղպէր քան. մի խմի, կով կգառնաս: Մի քիչ
էլ կաց, էս ա որդէ որ ա աղբուր ռաստ կգայ՝ կխմես:

Մի քիչ գալիս են՝ աղպէրը տենում ա մի ուղտի ոտի տեղ,
մէջը լիքը ջուր: Ուղում ա խմի՝ քիրը չի թողում. ասում ա —
ուղտ կգառնաս: Մի քիչ էլ գալիս են, տենում են մի ձիու ո-
տի տեղ, լիքը ջուր ա: Աղպէրն էլի ուղում ա խմի՝ քիրը էլի չի
թողում. ասում ա — ձի կգառնաս: Մախլաս, ըսենց աղպէրը
որդէ մի պուտ ջուր ա տենում, ուղում ա խմի՝ քիրը չի թողում:

Վերջը որ աղպօր ճարը կտրվում ա՝ ծարաւու թուք ու մու-
քը կպչում՝ քվօրիցը թաքուն մի գառան ոտի տեղից ջուր ա
խմում, ընում մի սիրուն, նաշխուն գառը: Քիրը եդ ա թա-
մաշ անում, տենում ինչ — աղպէրը մի սիպտակ գառն ա գառէ՝
հենուցը վազում. շատ ա լաց ընում, մըխկոտում, համայ էլ
որդէ, բանը բանից անց էր կացէ:

Ըսենց սոված, ծարաւ գալիս են գալիս, շատն ու քիչն Աստօժ
գիտայ՝ տենում են ճամփին մի աղբուր, կսկքին էլ մի եքայ

չինարի ծառը: Էս աղբրումը մի կուշտ ջուր են խմում, ծառաները կտարում: Եննայ քիրը նիլնում ա էդ չինարու գլուխը, գառնիկ—աղսէրն էլ չինարու տակին արածում ա:

Էդ իրիկունը, Թագաւորի նօքարները ձիանիքը բերում են էդ աղբուրը ջրելու: Խնչ անում են չեն անում՝ ձիանիքը ջուր չեն խմում: Գու մի ասի աղջկայ շողքը ընկնում ա աղբրի մէջը՝ ձիանիքը հուշտ են ընում՝ ջուր չեն խմում:

Թագաւորի նօքարները դէսն են մտիկ անում, դէսն են մտիկ անում՝ տենում են զագ չկայ: մըն էլ որ գլխները չեն բանձրացնում, չինարուն մտիկ տալի՝ տենում են ինչ — մի սիրուն, նաշխուն զագ ընդէ ֆրրֆրահար ա գալի: ձեն են տալի — ինս ես, ջինս ես, ջանավար ես՝ վեր արի տե՛նանք: Աղջիկը վէ չի գալի:

Թագաւորի նօքարները էթում են Թագաւորին խմաց անում, թէ — Թագաւորն աղբած կենայ: ձիանիքը տարանք աղբուրը ջրելու՝ ջուր չխմեցին — հուշտ ին ընում: Վիրեւ մտիկ տուինք, տեհանք մի հրեշտակի նման սիրուն զագ չինարու վրէն: Ինչքամ ձեն տուինք՝ վէ չէկաւ: Զինարու տակին էլ մի սիւղտակ, նաշխուն գառն էր արածում:

Թագաւորը հրամայում ա, որ էթան ոնց որ ընի ծառիցը վէ բերեն՝ բերեն իրա կուշտը: Էթում են ինչքամ կանչում են — ինս ես, ջինս ես, ջանավար ես, վեր արի՝ աղջիկը վէ չի գալի: Ասում են — ջրհանգամը գեօռ, վէ չի գալի: Էս նաշխուն գառն էլա տանենք Թագաւորին: Գառը որ աղաք են անում տանեն՝ էն սհաթը աղջիկը ծառիցը իրան վեր ա գցում: Տենում են ինչ — մի նաշխուն ակն ու արեգակ, հուրի մալաք աղջիկ: Էնքամ սիրուն, էնքամ սիրուն, էնքամ սիրուն՝ որ չուտես չխրմես, հէնց նրա գիւլ ջամալին Թամաշ անես: Նոր վեր են ունում էրկոն էլ՝ տանում Թագաւորի կուշտը:

Թագաւորը հարցնում ա — ինչ աղջիկ ես: մէն մէնակ էս դրհերանք ինչ ես շինում: Նոր աղջիկը նաղլ ա անում, ոնց որ ես ձեզ նաղլ արի: Թագաւորն էլ զաթի աղաղ՝ բերում ա սրտ վրայ պսակվում — օխտն օր, օխտը քշեր հարսանիք անում:

Թագաւորի պալատումը մի պառաւ կնիկ կար, որ նրա աղաքին քօձութիւն էր անում: Հարսանքից եդը, մի օր Թագաւորիցը իզին ա ուզում, ասում ա — տանե՛՛ք իսկուհիս: Ես իսկուհիս իսկուհիս:

դաշնեմ՝ էլ բերեմ: Վեր ա ունում տանում: գառն էլ եննու-
ցը վազ տալէն գալիս ա: Պառաւը աղջկայ շորերը հանում ա,
որ լեղացի՛ն՝ բռթում ա գցում ծովը:

Բա՛ գու հմի արի տես, պառաւը ի՞նչ անում ա չի անում՝ գո-
ռանը չի կարում ծովի դազկըը տուն բերի: — Ծովի էս գլխիցը
բըղըղալէն էթում ա էն գլուխը՝ էն գլխիցը գալիս էս գլուխը:
Նոր ի՞նչ հալով, զօռով, գիւջով, ծեծելօն գառին քշում ա ըն-
դիան՝ բերում:

Զագուքեար պառաւը թագաւորի կնկայ շորերը վեր ա ու-
նում տանում իրանց տունը, ինքը մի գարձըւորած, սեւ աղջիկ
ա ունենում: Նրա շորերը սրան ա հագցնում՝ տանում թա-
գաւորի պալատը, ասում ա — թագաւորն ապրած կենայ, հը-
րէս խանըմիս լեղացրի բերի: Թագաւորն էլ չի իմանում որ իրա
կնիկը չի:

Անց ա կենում մի օր, էրկու օր, էս պառաւի աղջիկը զաս-
տահւանգ ա տալի՝ պառկում: Թագաւորը հարցնում ա.

— Ա՛յ կնիկ, սիրտդ ի՞նչ ա ուզում, բերիլ տամ:

— Ասիկ զադ չէ՛, էն գառան մտիցը որ մի քանի թիքայ ընէր՝
կուտէի. ասում ա պառաւի աղջիկը:

— Բա՛ ասում ես քու հալալ աղպէրն ա. հմի ղըմիշդ ո՞նց ա
գալի, որ ուզում ես մորթիլ տայ:

— Ի՞նչ անեմ. իմ ջանիցը հօ՛ աղիղ չի. շատ էլ հալալ աղ-
պէրս ա. որ սիրտս նրա միան ա ուզում:

Ասենք պառաւի աղջիկը թագաւորին շատ էր զօռում, որ
գառին մորթիլ տայ՝ համայ թագաւորի հէնց իրա՛ ղըմիշը չէր
գալի, որ էնթալուր նաշխուն, սիրուն գառին մորթի. իլաքիմ
որ գիտար կնկայ հալալ աղպէրն ա:

Գառնիկ — աղպէրը ըստէ մնայ՝ գանք խալար տանք օրա քը-
վօրիցը:

Պառաւը որ նրան գցում ա ծովը՝ էն սհաթը մի սիպտակ
ձուկը վրա ա հասնում՝ կուլ տալի: Զկան փորումը որ իմանում
ա իրա գառն — աղպօրը ուզում են մորթի՝ ամեն օր, քշերուայ
ժամերի վախտին, որ ժամհարը ժամը տալիս ա ընում՝ ծովի
միջիցը ձէն ա տալի:

«Ժամհար, գու քու ժամը սիրես՝ թագաւորին կասես իմ
գառնիկ — աղպօրը սուրը չբաշի:»

Ըսենց իրեք հետ, ժամհարը քշերուայ ժամը տալիս՝ լսում
ա. «ժամհար, դու քու ժամը սիրես. թագաւորին կասես իմ

գառնիկ — աղպօրը սուրը չքաշի։»

Ժամհարը մնում ա զարմացած, թէ էս ի՞նչ ձէն պաի ընի,
վեր ա կենում էթում թագաւորին նաղլ անում։

— Թագաւորն ասլած կենայ, ասում ա. բս էլ իրեք հետ,
քշերուայ ժամը տալիս՝ ծովի միջիցը մի ձէն եմ լսում. —
«ժամհար, դու քու ժամը կսիրես, թագաւորին կասես իմ
գառնիկ — աղպօրը սուրը չքաշի։» Ձեմ գիտայ էս ի՞նչ բոս ա։

— Լաւ, ասում ա թագաւորը. էգուց քշերուայ ժամը տալիս
արի ընձ էլ իմաց տո՛ւ. գամ տենամ էգ ի՞նչ ձէն ա։

Ժամհարը քշերուայ ժամը տալու վախտին՝ գալիս ա թագա-
ւորին կանչում։ Թագաւորը ժամհարի հեննայ գալիս ա ժամը.
հէնց որ ժամհարը ժամը տալիս ա թէ չէ՝ լսում ա զորթ որ
մինը ձէն ա տալի. «ժամհար, դու քու ժամը կսիրես, թագա-
ւորին կասես իմ գառնիկ — աղպօրը սուրը չքաշի։»

Աւաւօտը որ կլիսանայ, թագաւորը կհրամայի որ իրա երկը-
րումը ինչքամ թողչի կայ՝ հաւաքուեն ծովի զրաղը՝ թող գցեն.
Ինչքամ թողչի կային հաւաքվում են՝ ծովը թող գցում. գցում
են գցում՝ դուս ա գալի մի սիպտակ ձուկը։ Ձկան փօրը ճղիկ ա
տալի, տենում ի՞նչ — իրա կնիկը ձկան փօրումը։

Դառը քօրը որ տենում ա թէ չէ՝ էն սհաթը ճանանչում
ա. վազում ա փաթթվում ճտովը. Փաթթվելու բաշտան՝ գա-
ւը էլ եգ իտան ա ընում։

Թագաւորը կնկանը վեր ա ունում՝ տանում իրա պալատը։
Էն Զագուքեար պառաւին ու նրա աղջկանն էլ կապիլ ա տալի
զաթի պօշիցը, որ տանի սարով, քարով, քօրով վէ գցի, թիքայ
թիքայ անի՝ մենծ թիքէն անկաջը բերի։

Նրանք հասան իրանց մուրաղին, դուք էլ հասնէք ձեր մն-
րաղին։

Ա՛՛՛ 2-էլ։

Ընումա չիլնում աւալ ժամանակին՝ մի թագաւոր. էս թա-
գաւորը հէնց մի մլնուճար աղայ ա ունենում — էլ զագ չէ։

Էս տղէն որ մենծանում ալ ըլնում ութ, իննը տարեկան՝ թագաւորը տալիս ա սրան վարժատուն, կարգալու: Մի հինգ, յից տարի էդ տղէն մնում ա վարժատանը, լաւ ուսում առնում, խելք սովորում՝ վերջը լաւ գիտուն մարդ գուց գալի որ արար աշխարհումը սրա հառը գիտուն չիլնում:

Անց ա կենում մի տարի, էրկու տարի՝ էս թագաւորի աչքերը մի դափիլ բռնւում ա, քօռանում: Աշխարհումը էլ հէքիմ չի մնում բերում են՝ սրա աչքերին ճար, իլաջ չիլնում: Վերջը սալըղ են առնում, որ Ձինումաչինայ քաղաքումը մի Լօղմայ հէքիմ կայ. թէ լաւացնի նա՛ կլաւացնի՝ էլ մարդ չէ:

Թագաւորը մարդ ա զրկում Ձինումաչինայ քաղաքը, էն Լօղմայ հէքիմին բերիլ տալի Լօղմայ հէքիմը ասում ա.

— Թագաւորն ասլրած կենայ. ինչքամ գեղ, գարման անհն՝ զուր ա. քու աչքերին ճար չիլնի: Մնում ա մի բան. թէ որ էն ճարեցիք՝ կլաւանայ. թէ չէ հօ՛ չէ: — Ծովի միջումը մի Ոսկէ Զուկը կայ, թէ կարացիք բռնի բերի, որ մորթեմ նրա արինը քսեմ աչքերիդ՝ կլաւանայ. թէ չէ էլ սաղանալու իլաջ չըկայ:

Թագաւորը էն սհաթը ջառ ա գոռալ տալի սաղ իրա երկրումը, որ ինչքամ թողչի կան՝ քօմմայ հաւաքուեն ծովի զրաղը, թող գցեն: Սաղ նրա երկրի թողչիքը հաւաքւում են՝ ծովը թող գցում:

Գցում են գցում, մի տարի, էրկու տարի, իրեք տարի, հինգ տարի, մալխասի տասը տարի՝ էն Ոսկէ Զուկը չէն կարում հանի: Վերջը մըն էլ որ թողը գցում են քաշում, տենում են ինչ — գուց էկաւ մի ձո՛ւկը, մի ձո՛ւկը. էնքամ սիրուն, էնքամ նաշխուն, որ կասենաս հրեշտակ բֆէր. կուզենայիր չո՛ւտես չիմես՝ հէնց նրա գիւլ ջամալին թամաշ անես. — էնքամ մի սիրունիկ զագ էր:

Թողչիքը ուրախութիւնից աշխարով մին էլան, որ թագաւորի ուղած ձուկը հանեցին: Համայ գու արի՛ տես թագաւորի տղէն՝ սեւասրտել ա՛ տխրէ, թէ ո՞նց էս թաւուր գեղալ ձուկը պտի տանեն մորթեն, որ ինչ ա հօր աչքերը լաւանայ: Տըղի զմիշը չի գալի. վեր ա ունում անաս Ոսկէ Զկանը՝ էլ եդ գցում ծովը:

Թողչիքը գառը, տխուր գալիս են թագաւորին նաղլ անում թէ.

— Թագաւորն ապրած կենայ. մենք էս տասը տարի մեռանք չարչարուելուն՝ անջախ կարացինք Ոսկէ Զուկը կալնի, տղէդ էլ եդ գցեց ծովը:

Թագաւորը էս որ խում ա՝ կատաղում ա. հրամայում՝ որ էն սհաթը տղին իրա երկրիցը սուրգիւն անեն՝ քշեն, որ մին էլ նրա երեսը չտենայ:

Թագաւորի հրամանն էր. ի՞նչ կարային անի. — ճամփի հմար ինչ որ պէտքն էր՝ տուին ու տանից դուս արին: Թագաւորի տղէն ա. հացից, մացից լցրեց՝ տոսլրակը ու ճամփայ ընկաւ: Գնաց ծովի զրբաղովը անց կացաւ՝ ձէն տուեց:

— Ո՛սկէ Զուկը, մնաս բարով. ես գնացի:

Եթում ա էթում՝ շատն ու քիչը Աստօծ գիտայ, մի աղբրի կշտի սրան մի արար ա ռաստ գալի: Թագաւորի տղէն ասում ա.

— Բար՝ աջողում, արար աղպէր:

— Բարո՛ւ, հաղար բարին, Թագաւորի ցեղ. էդ ո՞ր էս էթում:

— Խեղճ մարդ եմ. էթում եմ Ստամբօլ՝ աշխատանքի. տենամ մի քանի շայի ձեռս կրնկնի՞, թէ չէ:

— Զե՛ս գայ իրար հեննայ աղպէր ընենք. ինչ որ աշխատենք՝ հալալ աղպօր նման փայ անենք:

— Լա՛ւ, ասեց Թագաւորի տղէն. արի՛ ընենք. ինչքամ կաշխատենք՝ կէսն ինձ, կէսը քեզ:

Էս երկսով աղպէր էլան՝ գնացին: Գնացին, գնացին, շատն ու քիչը Աստօծ գիտայ՝ հասան Ստամբօլայ քաղաքը: (Ստամբօլը էդ վախտը Ուռումի Թագաւորի ձեռին էր:) Ըստէ երկսով մի օթախ քրեհեցին՝ մէջը կացան: Թագաւորի տղէն էթում էր բահելու՝ արարը մնում էր տանը, կերակուր, մերակուր էփում, հագրում, որ աղպէրը աշխատանքից գայ՝ ուտեն:

Էդ վախտերքը սալըղ, սուլուղ էր ընկէ քաղաքը, թէ Թագաւորի աղջկայ լիզուն բռնուել ա՝ չի խօսում. — ո՛վ կարենայ խօսացնի, Թագաւորը իրա աղջկիը նրան կտայ՝ վրէն էլ օխտը դաթրաբեռ ոսկի. Ո՛վ գնացել ա՝ չի կարացէ խօսացնի — քօմմքի գըլիններն էլ կտրիլ ա տուէ:

Էս բանը որ ընկնում ա արարի անկաջը՝ միտք ա անում, որ էթայ փորձի, բալքի կարենայ Թագաւորի աղջկանը խօսացնի: Ու մի օր էլ, որ աղպէրը առաւօտը էթում ա իրա բանին՝ ինքն էլ

Նրանից թաքուն, վեր ա կենում էթում թագաւորի խնամա-
քարի վրա նստում: Թագաւորը հարցնում ա.

— Ա՛յ հողածին, խի՞ ես էկէ:

— Թագաւորն ապրած կենայ, էկել եմ աղջկանդ խօսացնեմ,
— էտքում մարդիկ էկել են՝ ի՞նչ են չաթէ, որ դու ինչ չաթես:
Գնա՛, որդի, մեղք ես, ջահէլ ջիւան ես. գնա՛ արեւիգ ձէնն ածա՛:
— Ձէ՛, թագաւորն ապրած կենայ, ես իմ թքածը չեմ լիզի,
պտի խօսացնեմ. թէ չկարացի՛ արինս քեզ հալալ ա:

— Լա՛ւ, ասում ա թագաւորը. որ ինձ չես խում՝ մեղքն ու
վարձը քու շինքը, արի՛. համայ աղաքուց պտի իմանաս, որ
շարթը իրեք հետ ա. — աղջկանս իրեք հետ պտի խօսացնես:

— Լա՛ւ, թո՛ղ իրեք հետ ընի, ասեց արաքը. դա՛րուլ եմ:

Արաքը գնաց դուզ նի մտաւ թագաւորի աղջկայ օթախը. տե-
հաւ ի՞նչ—մի հուրի մալաք աղջիկ, որ չուտես, չխմես՝ հէնց նրա
գիւլ ջամալին թամաշ անես՝ նստել ա. քարգայ ա անում.
համայ որ ասես ձէն, ծպտուն չի հանում: Արաքը դէս մտիկ ա-
րեց, դէն մտիկ արեց՝ աչքովը զադ չընկաւ, մի ժանգոտած շա-
մադանից սալայի: Գնաց, էգ ժանգոտած շամադանը բերեց գը-
րեց աղաքը՝ հեննէն խօսաց:

— Բարձ՛ւլ, ասեց, շամադան աղաէր. քէ՞ֆդ, հա՞լդ: Էս շատ
վախա՛ ա իրար չենք տեսէ, ըսկի ի՞նչ թաղայ խաբար:

— Աստ՛ւ բարին, արաք աղաէր. փառք Աստու, լա՛ւ եմ. դո՛ւ
ո՛նց ես, ի՞նչ թաղայ խաբար պտի ընի. դո՛ւ ես դռնիցը գալիս՝
թաղայ խաբարը ինձ ես հարցնում, ես ըսկի դուս գալիս եմ,
որ իմանամ աշխարումը ի՞նչ ա ըլնում, ի՞նչ չէ. հէնց ես ա տա-
րէն տանէրկու ամիս՝ ըստէ վեր ընկած եմ:

— Բնա՛ ըսկի, շամադան աղաէր, հէքաթից, մէքաթից չե՞ս իմե-
նում՝ ասես, անկաջ դնենք:

— Ձէ՛, արաք աղաէր. ես հէքաթ չեմ գիտայ, թէ դու գի-
տան, ասա՛:

— Լա՛ւ, կասեմ. համայ պտի լա՛ւ անկաջ դնես, հա՛

— Ասա՛ անկաջ կանեմ. Արաքն ասում ա.

(Շարո-նալիլ)

Տ. Նա-ասարկանց:

Հաշար (տիպոյէ) (1917-24) րիւ 1280-ից հետո

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴՈՒԿԷԼ ԷԶՄԻՍԾՆԻ Ի ԿՕԳՍՐԾԱՊԱՏ: